



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

---

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան

6 դեկտեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի  
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի  
Հ. Նազարյանի

Քննության առնելով Վլադիմիր Մկրտչյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Վլադիմիր Մկրտչյանը 2018 թվականի նոյեմբերի 19-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ», «դ» և «ե» կետերը ճանաչել Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 8-րդ, 60-րդ, 73-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Դիմողի կարծիքով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս բավարար չափով չի սահմանում այն կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար, իսկ այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցներն անհրաժեշտ և պիտանի չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, քանի որ անձի սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտության տեսանկյունից Սահմանադրության 60-րդ հոդվածով սահմանված նպատակին հասնելու համար առկա են առավել բարենպաստ միջոցներ՝ օրենքով նախատեսված յուրաքանչյուր պարտականության կատարումն ապահովելու համար:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմով նախատեսված սահմանափակումները համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը, և ի վերջո, հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս վիճարկվող դրույթը չի սահմանել սահմանափակումների հիմքերը և ծավալը, դրանք բավարար չափով որոշակի չեն, որի արդյունքում էլ այդ իրավունքները և ազատությունները կրողները և հասցեատերերն ի վիճակի չեն դրսևորել համապատասխան վարքագիծ:

2.1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» և «ե» կետերի առնչությամբ դիմողը նշում է, որ այդ դրույթները բավարար չափով որոշակի չեն, քանի որ հնարավոր չէ որոշել, թե բարենպաստ վարչական ակտի հասցեատերն ի՞նչ ծավալով, ի՞նչ չափով կամ ի՞նչ աստիճանի պետք է օգտված լինի վարչական ակտով իրեն տրված իրավունքից, որպեսզի այդ հանգամանքը համարվի որպես ակտի հասցեատիրոջ կողմից վարչական ակտով իրեն տրված իրավունքի իրացում, և բարենպաստ վարչական ակտի հասցեատերը հնարավորություն չունի որոշելու, թե ինչ վարքագիծ պետք է դրսևորի, որպեսզի այն համապատասխանի օրենքի պահանջին:

3. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի

29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է ընդունման մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Դիմումին կից ներկայացված դատական ակտերի, մասնավորապես, Վարչական դատարանի 2017 թվականի հունիսի 27-ի վճռի և Վերաքննիչ վարչական դատարանի 2018 թվականի հունիսի 14-ի որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետը դիմողի նկատմամբ չի կիրառվել:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով անհատական դիմումին առաջադրվող պահանջներից մեկն էլ այն է, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ կայացված դատական ակտով կիրառվել է նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշյալ դրույթի մասով անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման:

3.2. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերի առնչությամբ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ **նշյալ դրույթների** մասով առկա չեն դիմումի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով նախատեսված հիմքեր, մասնավորապես՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան,

• դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,

• դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

• դիմումն ակնհայտ անհիմն չէ,

• դիմողը պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Վլադիմիր Մկրտչյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի մասով, մերժել:

2. «Վլադիմիր Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝



6 դեկտեմբերի 2018 թվականի  
ՍԴԴԿՈ-8